ՔԱՐՈԶԽՈՍՔԱՊԱՆ

Տ. ԱՌԵՆ ԱԲԵՂԱ ՃԵՊԵՃՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(6 հունիսի 2004 թ.)

«Ես ոնեմ զձեռս ի վերայ սորայ եւ դուք ամենեքեան աղօթս արարէք. զի արժանի լիցի սա զաւրհնեան քահանայութեան անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ»:

(Ձեռնադրության Մաշտոց)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Միրելի հավատացյալ քույրեր եւ եղբայրներ.

Մուր քառասուն օրեր առաջ Միացյալ Նահանգների Նյու Յորքի Սուրբ Վարդան Մայր Տաճարում թեմիս առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյան աղոթքի միջոցով հրահանգեց, որ ներկա գտնվող ժողովուրդը աղոթե ինձ համար, անպիտան ու անպետք ծառայի մը համար: Ես այսօր կխնդրեմ, որ դուք բոլորդ շարունակեք այդ աղոթքներն ինձ համար:

Անմիջապես ձեռնադրութենեն ետք եկա Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր քառասուն օրեր մնացի, որպեսզի պատրաստվիմ անարատ պահել ինքզինքս առաջի սեղանոն Տեառն Աստուծո: Այս պահուս ես կնորոգեմ իմ հավատարիմ ուխտի ծառայությունը Մայր Աթոռույս Ս. Էջմիածնի և հավատարիմ ու հնազանդ մնալ Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Ես իմ շնորհակալությունն եմ հայտնում Վեհափառ Հայրապետին իր հայրական սիրո համար, նույնպես և իմ շնորհակալությունը կհայտնեմ իմ հոգևոր ծնողիս՝ Խաժակ Սրբազանին, որ զիս արժանի տեսավ ձեռնադրելու, նույնպես շնորհակալությունս կհայտնեմ իմ Հայրս և Մայրս, որոնք տարիներ ի վեր անհուն սեր տվին ինձ, ինչպես նաև իմ կնքահայրիս: Կխնդրեմ, որ դուք շարունակեք ձեր աղոթքները ինձ համար: Ձեզանից շատերը թերևս ինձ ճանաչում են, ես ալ ձեզանից ոմանց ճանաչում եմ, պատահմամբ չեղավ, որ զիրար ճանաչում ենք մենք, այլ Եկեղեցին էր, Հայաստանյայց Եկեղեցին էր, որ մեզ քով քովի բերավ, որպեսզի մենք կարողանանք լինել հավատարիմ ծառաներ Քրիստոսի: Այս պահուս ես անկեղծորեն շատ զգացված եմ և ինքզինքս օրհնված կզգամ, որ առիթը տրվեցավ, որ մատուցեմ իմ անդրանիկ Պատարագն այս սուրբ կամարներու տակ, հոս՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեջ: Այս նույն Սուրբ Սեղանի վրա պատարագած են բազմաթիվ հոգևորականներ՝ Կաթողիկոսներ, եպիսկոպոսներ և քահանաներ, այդ շարքին մեջ՝ նաև Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը, որ իմ ազգականն էր: Պատարագած է նաև իմ հայրը՝ Տեր Ներսեսը, և գուցե իմ մեծ պապը՝ Տ. Ներսես ավագ քահանա Թավուգյան, որ եղավ Այնթապի հոգևորականը և տեղի հերոսամարտին հերոսներեն: Երբ երիտասարդ մը ձեռնադրվի, ինքը կմտնե հոգևորականներու շարքին մեջ, ինչպես շղթա մը կա, յուրաքանչյուր հոգևորական օղակ մըն է այդ շղթային մեջ: Ամեն անգամ, որ հոգևորական մը ձեռնադրվի, նոր օղակ մը

կմիանա այդ շղթային: Եվ այդ հոգևորականներու շղթան մեզի կրանի դեպի Կոմիտաս վարդապետ, Խրիմյան Հայրիկ, և այսպես մինչև Գրիգոր Լուսավորիչ, առաքյալները և, վերջապես, այդ շղթան կհասնի մեր Տեր Հիսուս Քրիստոս, որ այդ շղթային խարիսխն է:

Սիրելի հավատացյալներ, ինձ հետ կմիանան Ս. Խորանին վրա վեց ուրիշ նորընծաներ, որոնք այսօր կմիանան ինձ հետ աղոթքի մեջ: Անոնք կվերջացնեն իրենց քառասունքը այս շաբթվա ընթացքին, և գալ կիրակի անոնք ևս պիտի մատուցեն իրենց անդրանիկ Պատարագը: Սիրելի հավատացյալներ, ես խնդրում եմ, որ դուք նրանց համար ալ աղոթեք, որովհետև երբ ձեր հոգևորականները ուժեղ ըլլան, զորավոր ըլլան, այն ատեն ձեզ ավելի ուժ կուտան, որպեսզի միասին մենք կարենանք ծառայել մեր Տեր Հիսուս Քրիստոսին:

Այսօր Հայաստանյայց Եկեղեցին կհիշե Եղիա մարգարեն: Մենք գիտենք, որ ժամանակի ընթացքին շատ մարդիկ մտիկ չէին ընում մարգարեներուն, այս վեց նորընծաները մարգարեներու շավղով գալ շաբաթվանե սկսյալ պիտի մտնեն ձեր մեջ, պիտի սկսին առաքվել, պիտի սկսին քարոզել մեր Տեր Հիսուս Քրիստոսի խոսքերը, և ես խնդրում եմ, որ դուք ընդունեք իրենց, ընդունեք իրենց խոսքերը և ջըլլաք այն ժողովուրդեն, որ չընդունեց Եղիա մարգարեի խոսքերը:

Սիրելի հավատացյալ եղբայրներ և քույրեր, մենք հավաքված ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սուրբ կամարներու տակ, կոչվում ենք Հայաստանյայց Եկեղեցի: Եկեղեցին, սիրելի հավատացյալներ, մեր կամուրջն է մեր և Աստուծո միջև: Այդ կամուրջը պետք է միշտ ամուր ըլլա, և վերջապես, սիրելի հավատացյալներ, ես դարձյալ խնդրում եմ, որ դուք աղոթեք այս օղակին համար: Ես գրեթե ամենեն նոր օղակներեն մեկն եմ այդ հոգևորականներու շղթային մեջ: Ես խնդրում եմ անկեղծորեն, որ դուք իմ համար աղոթեք, որպեսզի այս նոր և դեռևս տկար օղակը զորանա, այնքան, որ ես կարենամ պինդ ըլլալ, ամուր ըլլալ, պիտի ծառայեմ Հայաստանյայց Եկեղեցվո և մեր Տեր Հիսուս Քրիստոսին. հավիտյանս հավիտենից. ամեն:

«Շնորք, սէր եւ խաղաղութիւն եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. ամէն»: